

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (սեղմագիր՝ ՋԼՄ-երի համար)**

Նախադպրոցական կրթության ոլորտում հիմնական աշխատանքներն իրականացվել են համաձայն «Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագրի»: Նախադպրոցական կրթության դրամաշնորհային միկրոծրագրերի իրականացումը գերակատարվել է. ՀՀ մարզերում նախատեսված 70-ի փոխարեն ներդրվել է 83 նախադպրոցական ծառայություն, այդ թվում՝ Արագածոտնի՝ 19, Արարատի՝ 22, Սյունիքի՝ 17, Վայոց Ձորի՝ 22, Արմավիրի՝ 23 և Գեղարքունիքի՝ 21 համայնքներում: Նշված 124 համայնքների հաստատություններում ընդգրկված են շուրջ 2500 երեխա: Ներդրվել է դպրոցների տնօրենների հավաստագրման համակարգը: Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի քննություններին մասնակցել են 1635 հավակնորդ, որոնցից 1362-ը ստացել են հավաստագիր: Ընդունվել են նաև ուսուցիչների ատեստավորման կարգը և որակավորման տարակարգերը: Ավարտվել է առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորման գործընթացը. ներկայումս դրանց թիվը 107 է: Հանրակրթության ոլորտի կարևոր խնդիրներից է նաև ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ներդրումը: Հայաստանի համադպրոցական ինտերնետային ցանցին դպրոցների միացման առավել մեծ ընդգրկվածություն ապահովելու նպատակով ընտրված կազմակերպությունների հետ բանակցությունների արդյունքում նախապես սահմանված 414 դպրոցի փոխարեն փոխկապակցման ենթակա դպրոցների թիվը ավելացվել է 45-ով՝ ներառելով առավել հեռավոր վայրերում տեղակայված դպրոցները: Ներկայումս Հայաստանի համադպրոցական ինտերնետային ցանցում ընդգրկված են 944 հանրակրթական ուսումնական հաստատություններ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումները հիմնականում իրականացվել են նախնական և միջին մասնագիտական կրթության միասնական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակման ու ներդրման, անձնակազմի վերապատրաստումների, ուսումնամեթոդական նյութերի արդիականացման, 12 տարածաշրջանային քոլեջներում լաբորատորիաների, համակարգչային լսարանների նորացման, նյութատեխնիկական բազայի հարստացման և վերազինման, ինչպես նաև շենքային պայմանների բարելավման ուղղությամբ: Բարձրագույն կրթության համակարգի գրավչության բարձրացման նպատակով անգլերեն լեզվով հրատարակվել է «Բարձրագույն կրթությունը Հայաստանում» գիրքը: Գործում է նաև բարձրագույն կրթության անգլիալեզու ինտերնետային կայքը՝ <http://studyinarmenia.org>: Հաստատվել է ՀՀ կրթության որակավորումների

ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցը, ինչպես նաև ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը և դրա կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը:

Ոչ պետական բուհերում մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզիայի պարտադիր պայմանների ու պահանջների ապահովման նպատակով իրականացված ստուգումների արդյունքում դադարեցվել է 1 և կասեցվել 4 բուհերի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով գործունեության լիցենզիաները:

ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված ՀՀ կրթության և գիտության նախարարության 10 միջոցառումները կատարվել են սահմանված ժամկետներում: